Կայք

Մակերես՝ 6.42կմ^2

Բնակչություն՝ 554

Գյուղ Ապարանի տարածաշրջանում, Ապարան քաղաքից հյուսիս-արևելք: Մարզկենտրոնից գտնվում է 29 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Մելքոնքենդ, Մելքումքենդ, Մյուլք, Մուլկի , մուլքի գյուղ անվանումները: Նախկինում մտելէ Երևանի նահանգի Էջմիածնի գավառի Ապարանի ոստիկանության մեջ:
Գյուղը գտնվում է Ծաղկունյաց լեռնաշղթայի արևմտյան լանջին՝ ծովի մակարդակից 1850 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տևական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 160-180, հունվարյանը՝ -60,-80: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սևահողային տափաստաններ են:
Բնակչության նախնիները եկել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի, Մուշի և Պարսկահայաստանի Խոյ, Սալմաստ գավառներից՝ 1828-1829 թթ.: 1831 թ-ին գյուղն ունեցել է 89, 1897 թ-ին՝ 551, 1939 թ-ին՝ 826, 1959 թ-ին՝ 481, 1979 թ-ին՝ 538 բնակիչ: Ըստ 2005 թ-ի ազգային վիճակագրական ծառայության տվյալների գյուղի բնակչության թիվը կազմել է 521 մարդ է: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 49%, կանայք՝ 51%: Բնակչության մեջ մինչաշխատունակ տարիքի բնակիչները կազմում են 30%, աշխատունակ ները՝ 55%, հետաշխատունակները՝ 15%: Գյուղն ունի առկա 148 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:
Տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները օգտագործվում են գլխավորապես որպես արոտավայրեր, վարելահողեր: Քաղաքացիների սեփականությունը կազմում է համայնքի տարածքի մոտ 51%: Պահուստային հողերից արոտավայրերը զբաղեցնում են 127 հա, մոտ 71 հա՝ վարելահողեր: Զբաղվում են դաշտավարությամբ, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ:
Արդյունաբերություն չունի:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է խմելու և ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: